117. Մաղխասեան Ստ. — Գրաբարի հոլովումը եւ նախդիրները: Տփ. տպ. Յ. Մարտ. 8° Բ եւ 52. 25կ.:
[Քննդտ. «Հանդէս Ամս.» Թ. 3:]

118. Մամիկոնեան Աղ. — Հովուի հարսնացու. (Հայի անցեալից:) Մոսկ. տպ. Բարխ. 35 էջ. 5 կ.:
[Քննդտ. «Մուրճ.» Թ. 5:]

119. — Վ. — Երգք հոգեւորք համահաւաքեալք յեկեղեցական գրոց ի ձեռնարկութիւն փոքրահասակ երգեցողաց: Վաղարշապատ, տպ. Էջմ.:

120. Մամուրեան Մ — Առտնին տնտեսութիւն: Կ. Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 8° ԻԲ եւ 296 էջ. 8ղշ.:
[Քննդտ. «Հանդէս Ամս.» 1892, Թ. 4:]

121. Մանուէլեանց Լ — Զալաքիների արշաւանքը. («Մուրճ» թերթէ:) Տփ. տպ. Ռօտ. 52 էջ. 10 կ.:
[Քննդտ. «Մուրճ.» Թ. 9:]

122. Մարգարեան Գ — Պատկերազարդ համառօտ աշխարհագրութիւն: Կ. Պ. տպ. Ն. Ճ. Արամեան. 4½ ղշ.:
[Քննդտ. «Հայրենիք.» 1892, Թ. 156 եւն եւն:]

123. Մասիս, երկշաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական. Կ. Պ. 25ղշ.:

124. Մեկնութիւն նոր կտակարանի. Հտր. Բ: Կ. Պ. 18ղշ.:

125. — Նոյնը. Հտր. Գ: Կ. Պ. 774 էջ. 28ղշ.:

126. Մէճմուայը ախպար (հայատառ տաճկաբարբառ) ամէնօրեայ լրագիր: Է. Տարի: Կ. Պ. հրտ. Յ. Թօլայեան. 120ղշ.:

127. Միճաստեան — Բառարան անգղիերէն-հայերէն-տաճկերէն: Կ. Պ. (Թերթք 1—14:)

128. Մկրեան Տէր Յ — Աղօթագիրք ըստ ժամակարգութեան հայ. եկեղեցւոյ: Բ. Տպագր.: Կ. Պ. 850 էջ. 15ղշ.:

129. Մշակ գրական եւ քաղաքական լրագիր: ԺԹ. Տարի: Տփ. Խմբ. Գր. Արծրունի. 10րբ.:

130. Մոպասան Գիւ տը — Գիւղական աղքատ. թրգմ. օր. Մ. Մալումեան. (հրտ. Խ. Մալ.:) Տփ. տպ. Արօր. 8° 12 եւ Աւէրբախ-Գիւղական Ջուլթակահար, թրգմ. Օր. Ն. Մ: Տփ. տպ. Արօր. 8° 31 էջ. երկուքը՝ 5կ.:
[Քննդտ. «Մուրճ». Թ. 6:]

(Շարունակելի։)

# ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՎԱՏԻԿԱՆՈՒ

—

## ՄՈՒՏ

Հռովմայ այլեւայլ մատենադարանաց մէջ պահուած հայկական ձեռագրաց ցանկն յօրինելու ձեռք զարկած ժամանակնիս մտածեցինք սկսել նախ եւ յառաջ Վատիկանեան Մատենադարանէն: Այս գրատունը թէեւ այլ լեզուաց ձեռագրաց ամենաճոխ հաւաքածոյքն է, վասն զի հոն հաւաքուած ձեռագիրք թէ իրենց բազմաթիւ ճոխութեամբն եւ թէ մանաւանդ հնութեամբն ու կարեւորութեամբ բոլոր աշխարհքիս վերայ աներկբայ առաջնութիւն ունին, բայց աղքատ է հայ ձեռագիրներով, որ են թուով 13, որոնց գրեթէ կէսն ալ աննշանակ է: Առանձին մեծահատոր ցուցակ մ'ի լատին լեզու, տպագրեալ ի ձեռն Վսեմ. կարդինալ Անճելօ Մայիի դարուս առաջին կիսուն, կը պարունակէ ալբեւեալ ձեռագիրներն ամբողջովին, ուր անտես չեն եղած նաեւ հայկականք:[1]

Այս 13 ձեռագիրներէն ներքին ոչինչ արժէք մ'ունին թիւ 4, 5, 6, 8, 10, 11 եւն, որոնք սովորական բաներ են (Նարեկացւոյ աղօթք, Տօնացոյց, Ժամագիրք, Առաքելոց թուղթք, Յուռութգիր եւն): Մնացեալներէն նշանակութիւն ունի թիւ 1, որ Աստուածաշունչ է լիակատար հանդերձ քանի մ'անվաւերականօք, (կտակք Նահապետաց.) Թ. 2 որ հետաքրքրական թղթեր կը բովանդակէ Ազարիա եւ Խաչատուր կաթուղիկոսաց եւ այլ պատմական յիշատակարաններ. Թ. 3 իւր քանի մը պատմական կտորներովը. Նոյնպէս նաեւ Թ. 7 ուր եկեղեցական պատմութեան համար քանի մը նշանաւոր կտորներ կը գտնուին, եւ Թ. 9 որ Զգօնի ճառերը կը բովանդակէ՝ թէեւ վերջինս նոր ժամանակի ընդօրինակութիւն է. եւն:

Հաւաքածոյիս ձեռագիրք այլեւայլ տեղ գրուած են. երկու հատ ի Հռովմ (Թ. 4 եւ 13), մէկ մէկ հատ ի «Հալապ» (Թ. 2), «Փռնաւս, ի դուռն Ս. Կարապետին» (Թ. 6), Վենետիկ (Ս. Ղազար, Թիւ 9) եւ նաեւ հատ մը (Թ. 10) «ի մայրաքաղաքիս Փերուժ (Perugia) ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցն Մատթէոսի եւ Բառնաբա:» Մնացելոց տեղն, ինչպէս նաեւ սովորաբար գրիչքն ու տեարք՝ անյայտ են: Ծանօթ գրիչք են Մէք. Թոխաթեցի եւ ծաղկող՝ Յովսէփ վրդ. (Թ. 1), Գրիգոր սարկաւագ (Թ. 2), «Ոսքէն» եւ Ստեփան (Թ. 3), եւ Թադէոս (Թ. 4), եւ Սիմէոն (Թ. 8) քահանայք, Աբրահամ Սարկաւագ (Թ. 6), Դաւիթ ոմն (Թ. 10) եւ ոմն ի Հարց Ս. Ղազարու (Թ. 9:) Ձեռագրացս տեարք մեծաւ մասամբ անծանօթ են, այլոցն ալ արդէն գրիչք են ստացիչք. բայց նաեւ երկու ձեռագիրք եւրոպացի բարձրաստիճան անձի մը ստացուած եղած են երբեմն, այսպէս՝ Թ. 7 եւ 10 որ Ալթամբսի դքսին (… Johann. Angel. Ducis ab Altaemps) վերաբերած են:

Չէ հնար որոշակի ճշդել եւ ստուգել հայերէն ձեռագրաց իւրաքանչիւրին ուսկից հոս եկած ըլլալը. սակայն անոնցմէ քանի մը հատին նկատմամբ հետեւեալ տեղեկութիւններն ունինք: Թիւ 4 գրչագիրը բերուած է հոս քաղքիս ազգային Հիւրանոցէն (Ոսպէթալէն), ինչպէս նաեւ թիւ 7 եւ 10 ձեռագիրք՝ Յովհաննէս-Անճելօ Ալթամբս Դքսին մատենադարանէն: Սակայն

[1] Ang. Mai, Scriptorum Veterum nova collectio. Romae. Tom. V, Pars II, pp. 239—242: Catalogus codicum armeniacorum. XIII. Biblioth. Vatic.

digitised by A.R.A.R.@

հայերէն ձեռագրաց անշուշտ թիւը կը ցուցնէ որ նոյն հայ հաւաքածոյն ըստ բախտի ծագած է։

Ամէն ձեռագիր կը կրէ ի գլուխ եւ ի վերջն վատիկանեան Մատենադարանին յատուկ կնիքը, որուն մէջտեղը կը տեսնուի Քահանայապետին զինանշանը երկրկարգեան թագաւ եւ բանալեօք, եւ շուրջն այս բառերը դրոշմուած են. „Biblio-theca Apostolica Vaticana.“

Հնութեան տեսակէտով չորս ձեռագիրք միւսներէն աւելի նշանաւոր են (թ. 4, 3, 10, 7) որ ԺԳ եւ ԺԴ դարէն են. ամէնէն հին ձեռագիրն (թ. 4) գրուած է ՈՀԹ 1220ին Յ. Ք. իսկ ամէնէն նորագոյնը (թ. 9) անցեալ դարուն սկիզբը։ — Հոս կը դնենք երեքտասան հայերէն ձեռագրաց տախտակն ըստ հնութեան իւրեանց, որչափ որ կարելի եղած է մեզ ճշդել որոշակի։

| Դար. | Հայոց Թուական. | Ամ Քրիստոսի. | Թիւ Ցուցակիս |
|---|---|---|---|
| ԺԳ դար | ՈՀԹ | 1220 | 4 |
| „ „ | ՉԼԶ | 1287 | 3 |
| ԺԴ դար | ՉԾ | 1301 | 10 |
| „ „ | չունի | 1301 1400 | 7 |
| ԺԶ դար | ՌԼԴ | 1585 | 2 |
| „ „ | ՌԽ | 1591 | 6 |
| „ „ | չունի | 1592 | 13 |
| „ „ | չունի | 1501 1600 | 5 |
| „ „ | չունի | 1501 1600 | 11 |
| ԺԷ դար | ՌՀԴ | 1625 | 1 |
| „ „ | ՌՀԹ | 1630 | 8 |
| ԺԸ դար | չունի | 1701 1800 | 12 |
| „ „ | չունի | 1719 | 9 |

Արուեստագիտական տեսակէտով առանձին մնայրութեան արժանի են թիւ 1 եւ 3 ձեռագիրք, յորս նկարք եւ զարդագիրք շատ գեղեցիկ եւ փափուկ ճաշակաւ գծուած են, եւ յոյժ պատուաբեր են ազգիս համար՝ նկատելով թէ ինչ աստիճան գեղարուեստից մշակութիւնն յառաջացած էր առ մեզ յընթացս ԺԴ. եւ ԺԷ դարուց։

Հռոմ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՄԻՍԱՔԵԱՆ

## 1.

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Cod. Arm. I. — ՌՀԴ—1625.

ԹԻՒ ԹԵՐԹՈՑ 581. Էջք 1159. ՄԵԾՈՒԹԻՒՆ 25×18 սմ.։ ԳՐՈՒԹԻՒՆ երկսիւն 19×13 սմ.։ ՏՈՂՔ 46։ Գիր մանր եւ նոր բոլորգիր։ [illegible] լաւ։ ՆԻՒԹ Թուղթ սպիտակ եւ ողորկ։ ԿԱԶՄ կաշեկազմ՝ նորագոյն։ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ եւ ԽՈՐԱԳԻՐՔ կարմիր. ԶԱՐԴԱԳԻՐՔ թուով 380, ԹՌՉՆԱԳԻՐՔ 56. ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ 314։ — ԽՈՐԱՆԱԶԱՐԴՔ 17 հատ եւ ԽՈՐԱՆՔ 3, այն է՝ թղ. 2ա, 307ա եւ 405ա։ ՊԱՏԿԵՐՔ զանազան եւ ոսկեզօծ՝ թուով 7, այսինքն թղ. 1բ, 88բ, 114բ, 306բ, 464բ, 517բ, 546բ։ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՔ երկնագոյն ի լուսանցս՝ 7 հատ, թղ. 306ա, 465բ, 466ա, 502ա, 509ա, 514ա, 539բ։ [illegible] թղ. 1ա, 40բ, 306ա, 464ա, 515բ, 581բ։

ԺԱՄԱՆԱԿ ծաղկման եւ գրութեան ՌՀԴ—1625։ — ԾԱՂԿՈՂ Յովէփ վարդապետ։ ԳՐՈՂ Միքայէլ Թոխաթցի, սակայն այս անուանս սակաւ ինչ քերուած է։

ՏԵՂԻ [illegible] ի Պոլիս։ ՏԷՐ Յովհաննէս վարդապետ Կոստանդնուպոլսեցի։ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ թղ. 463բ, 578բ, 580ա եւ բ եւ 581ա։

* Մատեանս է Աստուածաշունչ Հին եւ Նոր կտակարանաց եւ կը բովանդակէ

Ա. Հին կտակարան.

1. Թղ. 2ա. Գիրք Ծննդոց։

2. Թղ. 22բ. Նախադրութիւն եւ ցանկ Ելից։ — Թղ. 24բ. Ելք։

3. Թղ. 42ա. Նախադրութիւն եւ ցանկ Ղեւտականին։ — Թղ. 43բ. Ղեւտական։

4. Թղ. 55ա. Նախադրութիւն եւ ցանկ Թուոցն։ — Թղ. 56ա. Թիւք։

5. Թղ. 72ա. Նախադրութիւնք եւ գլուխք Երկրորդ օրինաց։ — Թղ. 73ա. Երկրորդումն օրինաց։

6. Թղ. 87բ. Նախադրութիւն եւ գլուխք գրոց Յեսուայ որդւոյ Նաւեայ։ Թղ. 89բ. Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ։

7. Թղ. 99բ եւ 100ա. Նախադրութիւն եւ գլուխք գրոց Դատաւորաց։ Թղ. 100բ. Դատաւորք։

8. Թղ. 111ա. Նախադրութիւն Հռութայ։ Թղ. 111ա. գիրք Հռութայ։

9. Թղ. 112բ. Յառաջաբանք Նախակարգեալ Թագաւորութեանց։ 113ա. Նախադրութիւն Թագաւորութեանց Դ. գրոցն։ — Թղ. 113ա. գլուխք Առաջին Թագաւորութեանց։ — Թղ. 115ա. Թագաւորութեանց Առաջին։ Թղ. 128բ. գլուխք Երկրորդ Թագաւորութեանց։ Թղ. 129բ. Թագաւորութեանց Երկրորդ։ — Թղ. 140բ. գլուխք Երրորդ Թագաւորութեանց։ — Թղ. 141բ. Թագաւորութեանց Երրորդ։ Թղ. 153բ. գլուխք Չորրորդ Թագաւորութեանց։ Թղ. 154բ. Թագաւորութեանց Չորրորդ։

10. Թղ. 166ա. Նախադրութիւն Առաջին եւ Երկրորդ Մնացորդաց։ — Թղ. 166ա. գլուխք Առաջին Մնացորդաց։ — Թղ. 166բ. Մնացորդաց Առաջին։ — Թղ. 177ա. գլուխք Երկրորդ Մնացորդաց։ — Թղ. 178ա. Մնացորդաց Երկրորդ։

11. Թղ. 191ա, բ. Նախադրութիւն եւ գլուխք Եզրի Առաջին։ Թղ. 191բ. գիրք Եզրի Առաջին։ — Թղ. 198ա. Հանդամանք գլխոյ Երկրորդ Եզրայ։ — Թղ. 198ա. Եզր Երկրորդ։ — Թղ. 202ա. Եզր Երրորդ։

12. Թղ. 211ա. Նախադրութիւն Նէեմեայ։ — Թղ. 212բ. Բանք Նէեմեայ որդւոյ Աքաղեայ։

13. Թղ. 218ա. Նախադրութիւն Եսթերայ։ — Թղ. 218ա. Եսթեր։

14. Թղ. 223ա. Նախադրութիւն Յուդիթայ։ — Թղ. 223ա. Յուդիթ է գիրս այս։

15. Թղ. 229բ. Նախադրութիւն Տոբիթայ։ — Թղ. 229բ. Տոբիթ։

digitised by A.R.A.R.@

16. Թղ. 234ա. Նախադրութիւն եւ գլուխք Առաջին Մակաբայեցւոց։ — Թղ. 235բ. գիրք Առաջին Մակաբայեցւոց։ — Թղ. 250ա, բ. Նախադրութիւն եւ գլուխք Երկրորդ Մակաբայեցւոց։ — Թղ. 251ա. գիրք Երկրորդ Մակաբայեցւոց։ — Թղ. 263ա. Նախադրութիւն եւ գլուխք Երրորդ Մակաբայեցւոց։ — Թղ. 263ա. գիրք Երրորդ Մակաբայեցւոց։

17. Թղ. 293ա. Նախադրութիւն Յոբայ։ — Թղ. 293բ. Յոբ։

18. Թղ. 307ա. Սաղմոսք Դաւթի իւրաքանչիւրին ներքեւ կան նշանակուած տունք եւ գումարք։

19. Թղ. 332ա. Յառաջաբանք Առակաց Սողոմոնի։ Թղ. 332ա. գլուխք Առակացն Սողոմոնի։ — Թղ. 332բ. Առակք Սողոմոնի։ Թղ. 335բ. Առակք Սողոմոնի։ Թղ. 341ա. Առակք Սողոմոնի արքայի Իսրայելի անյնինք, զոր գրեցին բարեկամքն Եզեկիայ արքայի Հրէաստանի։

20. Թղ. 343ա. Յառաջաբան եւ գլուխք Ժողովողին։ — Թղ. 344ա. Բանք Ժողովողի որդւոյ Դաւթի Սողոմոնի արքայի Իսրայելի (ի) Երուսաղէմ. Եկեղեսիաստէս։

21. Թղ. 347բ. Յառաջաբանք Երգ Երգոց։ Թղ. 348ա. Երգ Երգոց։

22. Թղ. 350ա. Յառաջաբանութիւն եւ գլուխք Իմաստութեան Սողոմոնի։ Թղ. 350բ. Իմաստութիւն Սողոմոնի։

23. Թղ. 357ա. գիրք Սիրաքայ որ կոչեցաւ Յեսու։

24. Թղ. 364բ. Յառաջաբանք մարգարէին Եսայեայ։ Թղ. 365ա. գլուխք գրոց Եսայեայ Մարգարէի։ — Թղ. 365բ եւ 366ա. Մարգարէութիւն Եսայեայ։

25. Թղ. 385բ. Յառաջաբան երկոտասան Մարգարէիցն։ — Թղ. 386ա. գլուխք Ովսեայ Մարգարէի։ Թղ. 386բ. Սկիզբն բանից Տեառն առ Ովսէէ։ — Թղ. 388բ. գլուխք Ամովսայ մարգարէի։ Թղ. 389բ. Ամովս։ — Թղ. 392ա. գլուխք Միքիայ Մարգարէի։ Թղ. 392ա. Միքիա։ — Թղ. 394ա. գլուխք Յովելեայ Մարգարէի։ Թղ. 394ա. Յովէլ։ — Թղ. 395ա. գլուխք Աբդիու Մարգարէի։ Թղ. 395ա. Աբդիու։ — Թղ. 395բ. գլուխք Յովնանու Մարգարէի։ Թղ. 395բ. Յովնան։ — Թղ. 396ա. գլուխք Նաւումայ Մարգարէի։ Թղ. 396բ. Նաւում։ — Թղ. 397ա. գլուխք Ամբակումայ Մարգարէի։ Թղ. 397ա. Ամբակում։ — Թղ. 398ա. գլուխք Սոփոնեայ Մարգարէի։ Թղ. 398ա. Սոփոնիա։ — Թղ. 399ա. Յառաջաբանք Անգէի Մարգարէի։ Թղ. 399ա. Անգէոս։ — Թղ. 399բ. գլուխք Զաքարիայ Մարգարէի։ Թղ. 400ա. Զաքարիա։ — Թղ. 403բ. գլուխք Մաղաքիայ Մարգարէի։ Թղ. 403բ. Մարգարէութիւն Մաղաքիայ։

26. Թղ. 404բ. Յառաջաբան եւ գլուխք Երեմիայ Մարգարէի։ — 406ա. գիրք Երեմիայ Մարգարէի։ — Թղ. 429բ. Բարուք։ Թղ. 430բ. Սորոյն Երեմիայի Ողբք։ — Թղ. 432բ. Աղօթք Սորոյն Երեմիայի։

27. Թղ. 432բ. Նախադրութիւն Դանիէլի Մարգարէի։ — Թղ. 433ա. Գլուխք Դանիէլի Մարգարէի։ — Թղ. 433բ. Դանիէլի դատաստանաց։

28. Թղ. 440բ. Նախադրութիւն Եզեկիէլի Մարգարէի։ — Թղ. 441ա. գլուխք գրոց Եզեկիէլի Մարգարէի։ — Թղ. 442ա. Տեսիլ Եզեկիէլ Մարգարէի։

Բ. Նոր կտակարան.

1. Թղ. 465ա. Աւետարան ըստ Մատթէոսի։ — Թղ. 480ա. Աւետարան ըստ Մարկոսի։ — Թղ. 489ա. Աւետարան ըստ Ղուկասու։ Թղ. 503ա. Աւետարան ըստ Յովհաննու։

2. Թղ. 516ա. Ցուցք ճի. գիր գլխոց Գործոց Առաքելոց։ Թղ. 516ա. Ցուցք ծգ. գլուխք Գործոց Առաքելոց։ — Թղ. 517ա. Ի գիրս Գործոց Առաքելոց ընթերցուածք ժզ։ — Թղ. 518ա. Գործք Առաքելոց Ղուկասու Աւետարանչի։

3. Թղ. 532բ. Յառաջաբան եօթանասնեցունց թղթոյն կաթուղիկէ։ — Թղ. 533ա. Թուղթ Յակոբու։ — Թղ. 534ա. Կաթուղիկէից թուղթ առաջին Պետրոսի։ — Թղ. 536ա. Թուղթ Պետրոսի երկրորդ։ — Թղ. 537ա. Գլուխք եւ թուղթ Յովհաննու առաջին։ — Թղ. 538բ. Գլուխք եւ թուղթ Յովհաննու երկրորդ։ — Թղ. 538բ. Գլուխք եւ թուղթ Յովհաննու երրորդ։ — Թղ. 539ա. Գլուխք եւ թուղթ Յուդայի եղբօր Յակոբայ։

4. Թղ. 539բ. Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ։ — Թղ. 546ա. ի փակման այսպէս. "Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի զոր ետես ի Պատմոս կղզւոջ։" — 546ա. կարմրագիր արձանագրութ. "Եւսեբի Հայրապետի ժամանակագրի յեկեղեցւոյ Պատմութենէն, վկայութիւն վասն աւետարանին Յովհաննու։" Սկիզբն. "Իսկ զինչ ասասցուք վասն Յովհաննու։"

5. Թղ. 547ա Գլուխք Պաւղոսի Հռովմայեցւոց։

6. Թղ. 552բ. "Գլուխք առաջնոյն թղթոյն Կորնթացւոց։" — Թղ. 552բ. Առ Կորնթացիս առաջին թուղթ առաքելոյ։ Թղ. 558ա. Գլուխք երկրորդ թղթոյն Կորնթացւոց։ — 558ա. Առ Կորնթացիս երկրորդ թուղթ։

7. Թղ. 561բ. Գլուխք Գաղատացւոց թղթոյն։ Թղ. 561բ. թուղթ առ Գաղատացիս։

8. Թղ. 563բ. Գլուխք Եփեսացւոց թղթոյն — Թղ. 563բ. թուղթ առ Եփեսացիս։

9 Թղ. 565բ. Գլուխք Փիլիպեցւոց թղթոյն։ — Թղ. 565բ. թուղթ առ Փիլիպեցիս։

10. Թղ. 566բ. Գլուխք Կողոսացւոց թղթոյն: — Թղ. 567ա. Թուղթ. առ Կողոսացիս։

11. Թղ. 568ա. Գլուխք առաջնոյ թղթոյն Թեսաղոնիկեցւոց — Թղ. 568ա. Առ Թեսաղոնիկեցիս թուղթ առաջին։ — Թղ. 569ա. Գլուխք Թեսաղոնիկեցւոց երկրորդ թղթոյն։ — Թղ. 569բ. Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ թուղթ։

12. Թղ. 570ա. Գլուխք Եբրայեցւոց թղթոյն։ — Թղ. 570բ. թուղթ առ Եբրայեցիս։

13. Թղ. 572բ. Գլուխք առ Տիմոթէոս առաջին թղթոյն։ Թղ. 573ա. Առ Տիմոթէոս առաջին թուղթ։ — Թղ. 574բ. Գլուխք երկրորդ թղթոյն առ Տիմոթէոս։ — Թղ. 574բ. Առ Տիմոթէոս թուղթ երկրորդ։

digitised by A.R.A.R.@

14. Թղ. 577բ. Գլուխք թղթոյն որ առ Տիտոս։ — Թղ. Թուղթ առ Տիտոս։

15. Թղ. 578բ. Գլուխք թղթոյն որ առ Փիլեմոն։ — Թղ. 578բ. Թուղթ առ Փիլեմոն եւ Արքիպպոս սարկաւագ եւ Ապփիա Տօղոմեոնեայ (ընթերցիր Տեառն Ոնեսիմոսի)։

Գ. Առնցմէ զատ կը գտնուին նաեւ հետեւեալ գրուածք.

1. Թղ. 268բ. Գիրք Մնացորդաց. Խօսք Որոմբենի կտակ առաջնոյն։ Սկիզբն. Հրաման կտակի Ռուբենի։

2. Թղ. 269բ. Կտակ Շմաւոնի վասն նախանձու Երկրորդ։ Սկիզբն. Հրաման բանից կտակի Շմաւոնի։

3. Թղ. 270բ. Կտակ Ղեւեայ վասն քահանայութեան եւ ամբարտաւանութեան։ Սկիզբն. Հրաման պատասխանւոյ բանից Ղեւեայ։

4. Թղ. 273ա. Կտակ Յուդայ Չորրորդ, վասն յարութեան՝ արծաթսիրութեան եւ պոռնկութեան։ Սկիզբն. Հրաման պատասխանւոյ բանից Յուդայ։

5. Թղ. 275ա. Կտակ Իսաքարայ։ Սկիզբն. Հրաման պատասխանեաց բանից Իսաքարայ։

6. Թղ. 275բ. Կտակ Զաբուղոնի։ Սկիզբն. Հրաման պատասխանեաց բանիցն Զաբուղոնի։

7. Թղ. 276բ. Կտակ Դանայ վասն ամբարտաւանութեան եւ ստութեան։ Սկիզբն. Հրաման պատասխանեաց Դանայ։

8. 277բ. Կտակ Նեփթաղիմայ վասն բնական բարութեան։ Սկիզբն. Հրաման պատասխանեաց կտակի Նեփթաղիմայ։

9. Թղ. 278բ. Կտակ Գադայ վասն ատելութեան։ Սկիզբն. Հրաման պատասխանեաց կտակի Գադայ։

10. Թղ. 279ա. Կտակ Ասերայ վասն երկդիմութեան եւ առաքինութեան։ Սկիզբն. Հրաման պատասխանեաց կտակի Ասերայ։

11. Թղ. 280ա. Կտակ Յովսեփայ վասն նախանձու։ Սկիզբն. Հրաման պատասխանեաց կտակի Յովսեփայ։

12. Թղ. 282ա. Կտակ Բենիամինի Բժաններորդ։ Սկիզբն. Հրաման կտակի զոր խօսեցաւ որդւոց իւրոց։

13. Թղ. 283ա. Պատմութիւն Ասանեթայ։ Սկիզբն. Եւ եղեւ յամին յառաջնում։ — Թղ. 288բ. Օրհնութիւն խոստովանութեան Ասանեթայ։ Սկիզբն. Մեղայ Տէր մեղայ առաջի քո։

14. Թղ. 291ա. Քառասուն Ցանկ անուանց։ Սկիզբն. Երկինք, Արեգակն, Լուսինն, Աստուածակն։

15. Թղ. 293ա. Յուլիանեայ Եպիսկոպոսի։ Սկիզբն. Նշանակէ գիրք Երանելոյն Յոբայ։

16. Թղ. 304բ. Երանելոյն Եպիփանու, Եպիսկոպոսի Կիպրացւոց, յաղագս Երգոց Սաղմոսարանին։ Սկիզբն. Զամենայն ինչ զոր ասաց։

17. Թղ. 539բ. Աղերս Եւթաղի։ Սկիզբն. Ամենայն իրիք ամենայն ուրեք ժամանակ է։

18. Թղ. 579ա. Նաւարկութիւն Պօղոսի առաքելոյ ի Հռովմ։ Սկիզբն. Հարիւրապետին որ տանէր զՊօղոս ի Հռովմ։

19. Թղ. 5:9ա. Հանգիստ Յովհաննու։ Սկիզբն. Էր ընդ եղբարս։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 468բ. Թուղթը քերուած եւ տեղ տեղ անընթեռնլի. "Աւարտեցաւ հին կտակարանս ի ձեռս Թերավարժ եւ յոգնամեղ ... չի ... աղաչեմ ... մի յիշել ի Տէր եւ Աստուած յիշեսցէ ... ամէն։"

2. Թղ. 578բ եւ 579ա. "Ընդօրինակեցան գերեւ (գիրքս) այս ընդ կեսարացւոց օրինակաց, որ կան յարկեգս գրոց Սրբոյն Պամփիւղեայ իւրովք ձեռօք գրեալ։ Թերագրութիւն. Գլխաւոր եմ եւ աստուածեղէն կրօնիցն վրդապետ. եթէ ուժք զիս յանօթ տայցես օրինակ փոխանակ ընդ իմ առնուցուս ... Պատասխանի ... այս առեմ ճշմարտութեամբ, ոչ տաց զքեզ վայրապար ումեք յանօթ ... այլ յորժամ տաց զքեզ յանօթ սիրելեաց իմոց. ազնիւ օրինակ քո փոխանակ առից։"

3. Թղ. 590ա, բ. Գլխաւոր յիշատակարան։ "Փառք քեզ Քրիստոս ... փառք անսկզբան ... վասն այսմ իրի եւ ես նուաստ Յովհաննէս վարդապետս կոստանդինուպօլսեցիս վաղ հետէ փափաքէի այս կտակարանացս. գեռ եւս մ...... (*) կայի որպիսութիւն եւս իրաց. նա յանկածօրէն բարեմիտ Յակոբ կրօնաւորի մահճն առդեցին թէ յաշխարհէս հրաժարեցաւ. եւ մենք յետ պատշաճաւոր թաղման եւ սգոյն, բերին այս աստուածաշունչ կտակարանս, թէ այս է զոր արարն. եւ իմ տեսեալ թէ գեռ եւս պակաս տեղ շատ ունէր, է ի ծաղկանց եւ է ի բանիցս. եւ եստ ըստ իմում մարմնաւոր կանձուցս ԺԳ.Ո գրամ ... եւ առի բաղում աշխատանօք ... մինչ ի յայս կերպս բերի եւ կատարեցի ... վասն որոյ աղաչեմ հանդիպողք սորին. օրինակելով եւ կամ ընթեռնլով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյասացեալ զՅակոբ կրօնաւորն, որ աշխատեց եւ գրել երետ ... եւ գրողի սորա Միքայէլի թախաթցոյ (այս վերջին երկու անուանք քերուած են քիչ մը) որ քան զայս Գ աստուածաշունչ գրած էր. եւ ինձ անարժան յետի ստացողի եւ նորոգողի եւ կատարողի գրոյս Յովհաննէս վարդապետի. հօրն իմոյ Մուրատշայի եւ մօրն իմոյ Աղնաւի, եւ միւս հոգեւոր մօրն իմոյ Մէննեա խաթունի, եւ այլ ամենայն ազգային իմոյ որ հանգուցեալ են առ Քրիստոս. ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցդ առ հասարակ թողութիւն շնորհեսցէ, այն որ առաւան է ի տուրս բարեաց. եւ նմա փառք յաւիտեանս ամէն։ — Բայց գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՀԴ (= 1625) ի ապրիլ ամսոյ եղեւ աւարտումն սմա. ի թագաւորութեան Տաճկաց Սուլթան Մուրատին. ի Հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ Մելքիսեթ կաթողիկոսին. եւ ինձ մեղաւոր անարժանիս, եւ եմ պատրիարք այսմ Նահանգիս, որ վերստին զարդարեցի զգիրքս. եւ զյիշատակարանս գրեցի, եւ զստանաւորքս տուի։" — Կը հետեւի ութվանկեան ոտանաւոր մը (Թղ. 580բ եւ 581ա), որուն առաջին մասն ան յանգով է եւ երկրորդը ին. 81 տուն յօրինելով. եւ անանց կարմրագիր սկզբնատառքն "Յովաննէս Կոստանդնուպօլսեցի ... բանս" կը կազմեն....

(Շարունակելի)։

digitised by A.R.A.R.@